րոց յանձն էր զեկ Արքունի Կառավարութեան, լեալ էին պաշտպան Ցունաց, մանաւանդ թէ 'ի սադրելոյ սոցին լարեցաւ որոդայթ Հայոց, և չէր հնար ումեք առնել զիրս ինչ արտաքոյ կամաց սոցին, որոյ վասն դժուարին էր Հայոց զերծանիլ յորոդայթէ անտի, և կամ մերձենալ առ նոսա, այլ իբրեւ զփորձ մատեաւ առ Իպրահիմ քեահեայ Կեսարացի Կիւլապեան Յակոբ աղա, զի սիրելի էր նմա. այլ ընկալաւ 'ի նմանէ պատասխանի՝ չյիշել միւսանգամ զխնդիրն. զի ամենեքին երդուեալ եւ նզովիւք փակեալ էին լինել 'ի կողմն Ցունաց։ Ապա հարկ լինէր Հայոց սպասել պատեհ ժամանակի։

Յոյնք 'ի Կոստանդինուպոլիս 'ի ձեռն Երուսաղէմացի Մուսա Էֆէնտեայ, որ դպրապետն էր յառաջադոյն 'ի դատարանն Երուսաղէմի եւ բարեկամ Ցունաց, առեալ էին զիլանն Հայոց, զոր առաքեալ էին յԵրուսաղէմ, և 'ի սոյն միջոցին առաքեցին զայն առ միաբանս իւրեանց, եւ Փոխանորդ նոցին կոչեալ զդպրապետ դատարանի՝ բարկութեամբ հարցանէ թէ ընդէ՞ր ետուք զայդպիսի գիր Հայոց, և կամ ընդէ՞ր ոչ ծանուցիք մեզ. և նա հարցանէ, ո՞րպէս 'ի ձեռս բերիք զայս գիր, ասէ. ոսկին զամենայն ինչ կատարէ, և բռնադատէ զայրն յորդորել զդատաւորն տալ զիր հակառակ Հայոց, այլ դատաւորն ոչ կամեցաւ։

Իսկ Յակոբ Եպիսկոպոս և Պօղոս վարդապետ Ջան 'ի գործ եդեալ անդադար աշխատէին և դեգերէին 'ի դրունս մեծամեծաց։ Լուեալ Ցունաց զխլրտիւն եւ զշնջիւն Հայոց, կազմեցան եւ նոքա հարկանիլ 'ի դիմի, հանեալ 'ի հրապարակ զգաղտնի մեքենայս իւրեանց, և տարեալ ցուցանէին մեծամեծաց Դրան զվաւերական գրեանս իւրեանց, իբրեւ թէ նոքօք ժառանգեալ են զՍ. Տեղիս, եւ Հայք յանիրաւի յափշտակեալ են զայնս։ Իսկ Նախարարք իբրեւ իրաւարար խնդրեցին եւ զհրովարտակս Հայոց տեսանել թէ ո՞րպիսի օրինակաւ տիրեալ են տեղեացն այնոցիկ, և զյափշտակեալն 'ի Ցունաց դարձուցեն առ նոսա։ Փոխարէն բազմաթիւ գրեանցն Ցունաց՝ մատուցին զօրինակս հրովարտակաց առ Ղալիպ Բէյիզ Էֆէնտի 'ի ձեռն Կեսարացի Պաշ Պազիրկեան Յովհաննէս Աղայի, իմանալ զմիտս նոցա։ Եւ նորա առեալ պահեաց զնոսա առ իւր. և խնդ-